



*«Նոր ժամանակի
կրթություն» ՀԿ*

*ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ*

*ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔ*

*Հետազոտության թեման՝ Ընտանիքի հոգեբանություն
կոնֆլիկտներ*

Առարկան՝ Պատմություն

Հետազոտող ուսուցիչ՝ Մարգարիտ Պետրոսյան

Ուսումնական հաստատություն՝ Օձունի թիվ 1

միջնակարգ դպրոց

Երևան 2022

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝

հոգեբանություն.կոնֆլիկտներ

Ընտանիքի

Հեղինակ՝

Մարգ՝

Ուսումնական հաստատություն՝

Մարգարիտ Պետրոսյան

Լոռի

Օձունի թիվ 1 միջնակարգ դպրոց

Բովանդակություն

1. Նախաբան: Հետազոտության նպատակները, խնդիրները, արդիականությունը.....2-4

2. Աշխատանքի բովանդակությունը.....4-12

3. Եզրակացություն.....13-15

4. Օգտագործված գրականության ցանկ.....16

Բովանդակություն

- 1.Ներածություն: Հետազոտության նպատակը, խնդիրները:
- 2.Ընտանիքի հոգեբանության բնութագիրը:
- 3. Կոնֆլիկտներ:
- 4.Եզրակացություն:
- 5.Օգտագործված գրականության ցանկ:

1.Ներածություն: Հետազոտության նպատակը, խնդիրները:

Ի՞նչ ենք հասկանում «ընտանիքի հոգեբանություն» ասելով:

Ընտանիքի հոգեբանությունն ուսումնասիրում է ամուսնության և ընտանեկան հարաբերությունները, նրանց առաջացման յուրահատկությունները, ձևավորումը, կայունացումն ու քայքայումը՝ նկարագրելով ընտանեկան և ամուսնական հատկանիշների, [ընտանիքի](#) անդամների սոցիալ-հոգեբանական և ֆունկցիոնալ առանձնահատկությունները միմյանց հետ:

Աշխատանքի նպատակն է գիտական տեսանկյունից ուսումնասիրել ընտանիքի, որպես մեկ ամբողջության, զարգացման օրինաչափությունները, կառուցվածքային բաղադրիչները, տիպերը, դերային համակարգը և այլն :

Հետազոտության խնդիրն է՝ ներկայացնել առողջ ընտանիքի ձևավորման մոդելը:

Ընտանիքն իր գոյության ընթացքում անցնում է փոփոխությունների մի երկարատև գործընթաց, որը կարելի է բաժանել փուլերի : Դիտարկելով ընտանիքի կյանքի ուղին՝ կարելի է տեսնել փոփոխությունների մի ամբողջ շղթա:

Ընտանիքիների առաջացումը և հետագա գոյատևումը հետազոտողներն անվանում

են «զարգացում»: Բայց ամեն մի փոփոխություն չէ, որ կարելի է զարգացում

համարել: Որոշ փոփոխություններ, անկասկած, ունեն զարգացման բնույթ, բայց կան նաև ընտանիքի կենսագործունեության այնպիսի փուլեր, որոնք կամ լրիվ հետընթաց բնույթ ունեն, կամ էլ պարունակում են քայքայման, հետաճի տարրեր:

Յուրաքանչյուր ընտանիք ունի ինչպես առաջադիմական զարգացման, այնպես էլ հետընթացի, քայքայման և ճգնաժամերի փուլեր:

Ընտանիքի հոգեբանությունը՝ որպես հոգեբանության մի առանձին ճյուղ, ուսումնասիրվել է բազմաթիվ հոգեբանների կողմից: Ինչպես հայտնի է ժամանակակից գրականությունից՝ ընտանեկան կյանքին նախապատրաստելու կարևոր ուղղություններից մեկն այն է, որ աղջիկներն ու պատանիները հասկանան, որ ամուսնությունը ոչ թե ընտանեկան երջանկությունն ընտրելու ավարտն է, այլ նրա սկիզբը: Յուրաքանչյուր երիտասարդ մինչ ամուսնանալը պետք է տեղեկացվի, թե

ինչին կարող է նա բախվել ամուսնական կյանքի ընթացքում: Եվ որպեսզի ընտանիքը լինի բարեհաջող, ապա բոլոր պատկերացումները պետք է լինեն համատեղ, որպեսզի ամուսիններից յուրաքանչյուրի վարքը չհակադրվի մյուսի պատկերացումներին: Եվ՝ կնոջից, և՛ ամուսնուց պահանջում է երեխաների հանդեպ պատասխանատվությունը: Հասարակության համար կարևոր է ոչ միայն ամուսնության կայունության փաստը, այլև ներընտանեկան հարաբերությունների որակը, դրանց խանգարումների հետևանքները: Շատ էական է համարվում ընտանիքում անդամների միջև աֆեկտիվ կապերը: Միջանձնային հարաբերությունները սուբյեկտների փոխադարձ պատրաստակամությունն է որոշակի փոխգործողությունների տիպին: Հուզական կայունությունը պայմանավորված է ամուսինների զգացմունքներով (սեր, համակրանք, հարգանք): Որպես կանոն, երեխաները ծնողների գործերը և առօրյան դարձնում են ավելի հաճելի: Ծնողների վերաբերմունքն իրենց երեխաների նկատմամբ շատ դեպքերում տարբեր է: Այժմ երեխաներով շատ ընտանիքներում կարելի է տեսնել, որ մեծերին հարգում են, իսկ փոքր երեխաներին երես են տալիս: Միջին տարիքի երեխաներին, որոնց մոռանում են, հիմնականում ավելի լավ մարդիկ են դառնում:

Ընտանիքը կարելի է բնութագրել որպես պատմականորեն կոնկրետ հարաբերությունների համակարգ ամուսինների միջև, որպես փոքր սոցիալական խումբ, որի անդամները կապված են ամուսնական կամ ազգակցական հարաբերություններով, կենցաղի ընդհանրությամբ և փոխադարձ բարոյական պատասխանատվությամբ, և որի սոցիալական անհրաժեշտությունը պայմանավորված է հասարակության բնակչության ֆիզիկական և հոգևոր վերարտադրության պահանջմունքով: Դեռևս Արիստոտելն է նշել. «Ընտանիքը հասարակության բջիջն է»: Հասարակությունը, հետևաբար նաև պետությունը, կարող են առողջ լինել, եթե առողջ և կայուն է ընտանիքը: Հոգեբանորեն առողջ է այն ընտանիքը, որում հուզական փոխհարաբերությունները ձևավորված ու կայուն են թե՛ ամուսինների, թե՛ ծնողների ու երեխաների միջև: Այսինքն առողջ ընտանիքում տիրում է դրական բարոյահոգեբանական մթնոլորտ:

Այսպիսի ընտանիքներում հարաբերությունները հիմնված են փոխադարձ հարգանքի և սիրո վրա: Սերը կառույց է մեր բոլոր խորքային պահանջմունքների և զգայությունների վրա: Դա մարդկային ուժերի ամենասեղմ, ամենախտացված միաձուլումն է մարմնական և հոգևոր, գիտակցական և ենթագիտակցական ուժերի: Սերն ուշադրություն է, բարություն, համբերություն, քնքշություն, երախտագիտություն, հարգանք և նվիրվածություն: Ամուսնական կյանքի հաջողության վրա ազդում է ամուսինների համատեղելիությունը բոլոր ոլորտներում, երբ մարդիկ ոչ միայն համատեղվում են, այլև լրացնում մեկը մյուսին: Սոցիալ-հոգեբանական համատեղելիությունը ենթադրում է որոշակի ընդհանրություն, որը կարելի է դիտարկել երեք մակարդակներում.

1. Բարձրագույն և առավել բարձր մակարդակը արժեքակողմնորոշիչ միասնությունն է կենսական արժեքների, ձգտումների, իդեալների, հետաքրքրությունների, համոզմունքների միասնությունը, ինչպես նաև աշխարհայացքային միասնությունը:
2. Ֆունկցիոնալ-դերային սպասումների համաձայնեցվածությունը մարդկանց^a իրենց դերերի և ֆունկցիաների մասին պատկերացումների համաձայնեցվածությունն է տվյալ միության մեջ:
3. Մարդկանց անհատական-հոգեբանական բնութագրերի համատեղելիությունը:

Այսպիսով, եզրակացնում ենք, որ անձի, անհատի կայացումը, սոցիալականացումը սկսվում է ընտանիքում:

2. Ընտանիքի հոգեբանության բնութագիրը:

Բազմաթիվ գիտական և այլ աշխատանքներ են նվիրվել ընտանիքի ամենատարբեր հիմնահարցերին: Ընտանիքի վերաբերյալ կարծես թե ամեն ինչ հայտնի է ու պարզ, սակայն այն նույնքան բարդ է, որքան հասարակությունը: Ընտանիքի և հասարակության կապն առանձնահատուկ նշանակություն ունի անձի զարգացման, նրա մարդկային ճակատագրի համար: Պատահական չէ, որ հասարակական բոլոր կառույցները շահագրգիռ են ընտանիքի կյանքի բովանդակության և կառուցվածքի նկատմամբ: Ընտանիքը հասարակության հոգեբանական հայելին է: Այսօր նկատելի է ընտանիքի զարթոնքի ու

վերակազմության նոր շրջան: Հասարակությունը ձգտում է իր վրա վերցնել ընտանիքի որոշ գործառույթներ, թեթևացնել նրա բեռը: Ընտանիքը դիտարկվում է որպես իր անդամների որոշակի կարգավիճակների ու դերերի համակարգ: Ըստ այդմ, ընտանիքն անձանց և նրանց փոխկապակցված կարգավիճակների ու դերերի ամբողջություն է:

Յուրաքանչյուր սոցիալական խմբում նրա անդամները գրավում են որոշակի կարգավիճակներ և դիրքեր: Ստանձնելով որոշակի կարգավիճակ՝ անձն այն պետք է իրագործի: Անձի սոցիալական դերը նրա համապատասխան կարգավիճակի իրագործումն է, կարգավիճակի դինամիկան ժամանակի ընթացքում: «Դիրք» ասելով պետք է հասկանալ տվյալ սոցիալական խմբում անձի ազդեցիկության աստիճանը: Խմբում, ընտանիքում որևէ անձ կարող է պաշտոնական բարձր դիրք չունենալ, բայց ավելի ազդեցիկ լինել, քան այլ անդամ, ով բարձր դիրք ունի: Անձի դիրքը նրա գրաված պաշտոնական, ձևական տեղն է որևէ խմբի կազմում: Երբ որևէ ճանապարհով սոցիալական նոր խումբ է ստեղծվում, դրանում առաջանում են դիրքեր, որոնք զբաղեցվում են անձանց կողմից: Առանձնացնում են դիրքերի երկու տիպ՝

1. Վերագրվող դիրքեր, որոնք մարդկանց անհատական առանձնահատկություններով պայմանավորված դիրքերն են:

2. Ձեռք բերված դիրքեր, որոնք կապված են անձի գիտելիքների և հմտությունների հետ :

Երեխայի անձի ձևավորումն առաջին հերթին տեղի է ունենում ընտանիքում, և ընտանեկան մթնոլորտը, հարաբերությունները, դաստիարակությունը վճռորոշ ազդեցություն են ունենում երեխայի ներդաշնակ զարգացման և հոգեկան առողջության վրա: Երեխան վաղ տարքից ծնողների կողմից չի ընկալվում որպես անձ: Հաճախ մայրը կարող է մոռանալ երեխայի գոյության մասին և երկար ժամանակ թողնել նրան միայնակ: Անձնական շփումից զրկված և մեկուսացված երեխան ի վիճակի չէ զարգացնել սեփական հմտությունները և ես-կոնցեպցիան և նա

հոգեբանորեն չի ապրում նորածնի փուլը, նրա ձգտումները նրբությանը և մարմնական կոնտակտին այդպես էլ չեն բավարարվում: Չցուցաբերելով վատահույություն ուրիշներին՝ նա հաճախ օգտագործում է լեզուն, որն էլ հանդիսանում է անցում մանկության փուլին: Իհարկե նրանք կարող են շատ խոսել միմյանց հետ, բայց դա ավելի շուտ դիմակավորված բնույթ է կրում, քան իրական զգացմունքների բացահայտումը:

Մայրն իր հույզերը բաց չի արտահայտում, նա թույլ չի տալիս, որպեսզի երեխան դանդաղ զարգանա իր հունով: Նա մշտապես պետք է այնպիսի վարք ցուցաբերի, որը ծնողներն են հարմար գտնում: Նրան արգելվում է լացել, գոռալ, բարկանալ ծնողների վրա, քույրերի, եղբայրների, պատռել հագուստը և այլն: Մայրը կառավարում է նրա զրոսանքները, խոսակցությունը, ընթերցանությունը:

Իդեալական է համարվում երեխայի համար այն գնահատականը, որը տրվում է նրան որպես բարձր նշանակություն ունեցողի: Առաջնեկը ծնողների համար նոր, հետաքրքիր, չբացահայտված էակ է: Երեխայի ծնունդը բնության հրաշալիք է: Ծնողները զգում են իրենց արարիչներ, դրա համար առաջին երեխան նրանց կողմից ընկալվում է իրենց սիրո և հիացմունքի օբյեկտ: Նրա վարքը, ի տարբերություն մյուս երեխաների, անհանգստացնում է շրջապատողներին, մշտապես առկա է նրա նկատմամբ մյուսների ուշադրությունը: Առաջնեկի դաստիարակումը շատ ընտանիքներում անինքնավստահության և ռիսկի հետ է կապված: Շատ առաջնեկների համար անսպասելի է երկրորդ երեխայի ծնունդը՝ նրանք կարող են ցուցաբերել եսակենտրոնություն, իրենց էներգիան ուղղել ավելի հասուն շփումներին: Եթե բացասական զգացմունքները շատ ինտենսիվ են, դրանք կարող են դառնալ խոր հոգեբանական խնդիրների պատճառ: Երկրորդ երեխայի ծնունդը ծնողների մոտ ավելի քիչ տագնապ է առաջ բերում: Երկրորդ երեխան ընտանիքում երբեք չի տառապում միայնակ երեխայի իրավիճակով: Հետազոտությունները ցույց են տվել, որ մայրն ավելի քիչ է խոսում և ավելի քիչ է զբաղվում երկրորդ երեխայի հետ: Դրա տեղը զբաղեցնում է մեծը և ժամանակի ընթացքում երկրորդ երեխան զգում է, որ չի կարող համեմատվել մեծի հետ: Մրցակցությունը մեծ և փոքր երեխաների միջև շատ տարածված երևույթ է: Այն հատկապես արտահայտվում է, երբ երկու

երեխաների միջև կա տարիքային ավելի փոքր տարբերություն:

Միակ երեխաներն իրենց ծնունդից զարգանում են հատուկ միջավայրում: Շրջապատված լինելով երկար ժամանակ միայն մեծերով՝ նրանք ստանում են ավելի անձնական փորձ, քան այն երեխաները, որոնք ունեն քույր և եղբայրներ: Միակ երեխայի զարգացման էությունը կայանում է նրանում, որ նա երկար ժամանակ շփվում է միայն մեծերի հետ: Հնարավորություն չունենալով համեմատել իրեն քույրերի կամ եղբայրների հետ, այլ տեսնելով միայն անհասանելիներին, երեխան զգում է իր թուլությունը, անկատարելությունը: Նա մշտապես իր ծնողների աչքի առջևում է: Միակ երեխաներին, որպես կանոն, բավականին շատ են օգնում, և ժամանակի ընթացքում երեխան գիտակցում է, որ մշտական օգնության կարիք ունի: Նորմալ պայմաններում ծնողների [վարքը](#) ընթանում է 3 մոդելներով.

1. Ծնողի վերահսկողության մոդելն է, երբ ծնողը ուշադիր է ,բարյացակամ վերաբերմունք ունի երեխայի նկատմամբ, բայց նաև հսկում է երեխային և որոշակի պահանջներ ներկայացնում, կատարում է երեխայի ցանկությունները, բայց ունի իր հատակ ուղղվածությունը և բացատրում է երեխային իր պահանջների իմաստը: Այս երեխաների մոտ արտահայտվում են բարձր մակարդակի ինքնուրույնություն, հետաքրքրասիրություն, ընկերասիրություն, շրջապատում կողմնորոշվելու կարողություն:

2. Ծնողի գերիշխման մոդելն է , երբ ծնողները խիստ են, պատժում են, համարյա քիչ են շփվում երեխայի հետ, երեխան իր սեփական կարծիքն արտահայտելու իրավունք չունի: Այս ընտանիքը երեխային օտարելու հնարավորություններ է ստեղծում և նման ընտանիքում երեխայի սոցիալականացումն անհնար է: Այս երեխան շատ ցածր ինքնագնահատական ունի, չի վստահում մարդկանց և ինքնամփոփ է:

3.Ներողամտության մոդել, երբ ծնողները ներողամիտ են, պահանջկոտ չեն, ընտանիքը առանձնապես չի զբաղվում երեխայի դաստիարակությամբ: Այս երեխաների մոտ շատ ցածր ինքնատիրապետում կա, ինքնավստահությունը շատ

ցածր մակարդակի վրա է: Այսպիսի ընտանիքում մեծացող երեխան արագ անկախանում է, որովհետև բարձիթողի է, ազատ: Չունեն հետաքրքրություններ, նրան զգում են ,որ բեռ են ընտանիքի համար:

Ընտանիքում ձևավորվում են երեխայի բնավորությունը, ինքնագիտակցությունը, ինքնագնահատականը, բարոյական պատկերացումները, սոցիալական դիրքորոշումները, երեխան յուրացնում է վարքի կանոնները, տեղի է ունենում անձի սոցիալականացում:

Այսպիսով, եկանք եզրակացության, որ յուրաքանչյուր ընտանիք կազմված է անդամներից, ինչպես նաև նրանց միջև գոյություն ունեցող կապերից ու փախհարաբերություններից: Այդ ամբողջությունն էլ ընտանիքի կառուցվածքն է: Ընտանեկան դերերը բոլոր այն [սոցիալական դերեր](#)ն են, որոնք անձի կատարում են՝ ի հետևանք այն բանի, որ ունեն ընտանիք և այնտեղ որոշակի դիրք են զբաղեցնում: Այդտեղ «ընտանեկան դեր» հասկացությունն ընդհանուր բնույթ ունի: Հասարակության համար կարևոր է ոչ միայն ամուսնության կայունության փաստը, այլև ներընտանեկան հարաբերությունների որակը, դրանց խանգարումների հետևանքները: Շատ էական են համարվում ընտանիքում անդամների միջև աֆեկտիվ կապերը:



3. Կոնֆլիկտներ:

Ի՞նչ ենք հասկանում «կոնֆլիկտներ» ասելով:

Գոյություն ունի «կոնֆլիկտ» հասկացության մի քանի սահմանում: Բ. Մ. Ռեբուսը կոնֆլիկտը բնութագրում է որպես մարդկանց գիտակցության մեջ միմյանց հանդեպ հակադարձ ուղղված և անհամատեղելի միտումների բախում՝ կապված բացասական սուր հուզական ապրումների հետ: Ըստ Ա. Վ. Սերգեյչուկի՝ կոնֆլիկտն անհատների անհամատեղելի նպատակների, հետաքրքրությունների, դիրքորոշումների, կարծիքների, հայացքների բախում է: Ի տարբերություն Ռեբուսի և Սերգեյչուկի՝ Ա.Մ.Ստոյարենկոն կոնֆլիկտը բնութագրում է ոչ թե որպես բախում, այլ հակասություն: Կոնֆլիկտը երկու և ավելի մարդկանց (խմբերի) միջև սուր և դժվար լուծվող հակասություն է, որը բնութագրվում է հակամարտությամբ, հակասող կողմերի կողմից ուժեղ միջոցների փոխադարձ կիրառմամբ՝ հակառակ կողմին հաղթելու նպատակով:

Շատ կարևոր է ուսումնասիրել ընտանեկան հարաբերություններում տեղի ունեցող տեղաշարժերը, ընտանեկան կոնֆլիկտների առաջացման պատճառները և դրանց ազդեցությունը երեխայի անձի ներդաշնակ ձևավորման վրա: Ըստ վիճակագրական տվյալների ընտանեկան կոնֆլիկտների հիմնական պատճառը հաղորդակցման կուլտուրայի, փոխադարձ վստահության, քաղաքավարության, ուշադրության, բարյացակամության, նրբազգացության բացակայությունն է՝: Իրականում կոնֆլիկտների պատճառ կարող են հանդիսանալ հոգեբանական անհամատեղելիությունը, սեռական խնդիրները, միմյանց մտադրությունները չհասկանալը, վարքի սխալ մեկնաբանությունները, բարոյականության վերաբերյալ տարբեր մոտեցումները, պարտքի և պատասխանատվության զգացումի բացակայությունը և այլն: Ընդլայնված ընտանիքներում կոնֆլիկտներն ավելի հաճախ են ծագում, քան բջջային ընտանիքներում: Ընդլայնված է այն ընտանիքը, որտեղ բացի ամուսիններից և նրանց երեխաներից կան նաև այլ ազգականներ

1.Տե'ս Սեդրակյան Ս.Ա., Ընտանիքի հոգեբանություն, Երևան, 2010, 456 էջ:

ազգականներ: Գոյություն ունեն նաև այնպիսի ընտանիքներ, որտեղ բավականին բարձր է կոնֆլիկտայնության աստիճանը, խաթարված է ընտանիքի անդորրը, միջանձնային հարաբերություններում առկա է լարվածություն: Դրանք են, օրինակ՝ -նկրտիկ ընտանիքները, որտեղ գույգի մոտ նկատվում են տազնապայնության բարձր մակարդակ, քնի խանգարում, ագրեսիվություն,

-ճգնաժամային ընտանիքներ, որտեղ ամուսինները թշնամաբար են տրամադրված միմյանց նկատմամբ, հաշվի չեն առնում միմյանց հետաքրքրությունները, հակված չեն փոխզիջման,

- պրոբլեմային ընտանիքներ, որտեղ առկա խնդիրների, կյանքի ծանր պայմանների արդյունքում ընտանիքը հայտնվում է անկայուն վիճակում:

Մշտական վեճերը, կոնֆլիկտները միանշանակ ազդում են ինչպես ամուսնական գույգի, այնպես էլ երեխայի հոգեկան առողջության վրա: Ծնողների միջև ծագած կոնֆլիկտի արդյունքում երեխան կարող է ունենալ մեղքի զգացում՝ կարծելով, որ ինքն է հանդիսացել կոնֆլիկտի պատճառ: Որոշ դեպքերում էլ երեխայի մեջ կարող է առաջանալ վախի զգացում: Սա նկատվում է հատկապես այն ժամանակ, երբ երեխան ականատես է լինում ծնողների վեճին կամ բռնության տեսարանների: Այսպիսի երեխաներն ապրում են մեղքի, վախի զգացումով, լինում մեկուսացված ու անհանգիստ, նաև կարող են ունենալ նյարդային, հոգեսոմատիկ և այլ հիվանդություններ: Հարկ է նշել, որ որոշ երեխաների համար էլ կոնֆլիկտը դառնում է սովորական մի երևույթ: Հետագայում՝ հասուն տարիքում, նրանք այդ նույն անտարբերությունը դրսևորում են շրջապատող մարդկանց, երևույթների նկատմամբ, դառնում են սառնասիրտ, ունենում ապրումակցման ցածր մակարդակ: Այս երեխաների ծնողները, տարված լինելով հարաբերություններ պարզելով, չեն նկատում, որ իրենց երեխան ձեռք է բերում բնավորության բացասական գծեր, կատարում անընդունելի արարքներ, դրսևորում հակասոցիալական վարքագիծ²: Ընտանիքում ծնողը կարող է կոնֆլիկտներ ունենալ տարբեր տարիքի երեխաների հետ:

2.Տե՛ս Ա.Ա. Նալչաջյան ,Սոցիալական հոգեբանություն ,Երևան,2004, 432 էջ:

Պատճառը ծնողի՝ երեխայի տարիքային և հոգեբանական առանձնահատկությունները չգիտակցելն է, դաստիարակության ձևերին չտիրապետելը, երեխայի մտադրությունները չհասկանալը, նրան մշտապես փոքր և անկարող մարդ համարելը: Մի տարիքային փուլից մյուսին անցումն ուղեկցվում է ճգնաժամով, որը միշտ չէ, որ սահուն է ընթանում: Ճգնաժամը կարող է լարվածություն առաջացնել հարաբերություններում՝ հատկապես երեք տարեկանում և դեռահասության տարիքում: Մեծ թվով կոնֆլիկտներ են առաջանում դեռահասության տարիքում, ինչը պայմանավորված է դեռահասների հոգեբանական, ֆիզիկական և սեռական կյանքում տեղի ունեցող փոփոխություններով: Դեռահասությունն ինքնին համարվում է ճգնաժամային տարիք, և այս տարիքային փուլում առավել կարևոր են ընտանեկան ջերմ հարաբերությունները, փոխադարձ վստահությունը, հարգանքը, փոխըմբռնումը: Ծնող-երեխա հարաբերություններում կոնֆլիկտներ են առաջանում նաև սխալ դաստիարակության պատճառով: Ծնողը միշտ ձգտում է իր երեխային դարձնել օրինակելի, անթերի՝ կիրառելով խիստ պատժամիջոցներ, կոպիտ վարվելով, քիչ խրախուսելով, երբեմն էլ դաժան վերաբերմունք դրսևորելով: Ոչ տեղին պատիժը, ծնողի կոպտությունը, դաժանությունը երեխայի մեջ հանգեցնում են երկու ծայրահեղ դրսևորումների. առաջին դեպքում երեխան մեծանում է չարացած, ագրեսիվ, երկրորդ դեպքում՝ անվստահ, բարդությամբ լորված: Երեխա-երեխաների հարաբերություններում կոնֆլիկտի պատճառները մի քանիսն են: Առաջին պատճառը երեխայի հանդեպ ուշադրության պակասն է: Երեխա-երեխա հարաբերություններում կոնֆլիկտի առաջացման երկրորդ պատճառը ծնողի կողմից երեխաների միջև սեռային խտրություն դնելն է:

Կոնֆլիկտների պատճառ կարող են հանդիսանալ կենցաղային պայմանները, ֆինանսական խնդիրները, կրթվածության մակարդակի տարբերությունները, մայրական խանդը, հարսի ինքնահաստատվելու ձգտումը, երեխայի դաստիարակության հետ կապված տարբեր մոտեցումները, բնավորության և խառնվածքի անհամատեղելիությունը և այլն: Կոնֆլիկտներ են առաջանում նաև

ընտանիքի այլ անդամների միջև, երբ առաջ է գալիս նյութական բարեկեցության, ժառանգության հարցը:

Առաջին հայացքից թվում է, թե այս տեսակի կոնֆլիկտներն ազդեցություն չունեն երեխայի հոգեկան զարգացման վրա, սակայն, երբ երեխան ակնատես է լինում, թե ինչպես են ծնողները վիճաբանում, վիրավորում, վարկաբեկում մեկը մյուսին, փոխվում է նաև նրա հոգեվիճակը: Կոնֆլիկտային իրադրությունը երեխային դարձնում է սառնասիրտ, չշփվող, դաժան, անուշադիր, ագրեսիվ, կոպիտ կամ էլ անվստահ, ինքնամփոփ, ընկճված ու անտարբեր:

Ընդհանրացնելով՝ եկանք այն եզրակացության, որ ընտանիքի անառողջ մթնոլորտը, ամուսինների կոնֆլիկտային հարաբերությունները միանշանակ բացասական ազդեցություն են գործում երեխայի վրա: Երեխան, որը մշտապես գտնվում է լարված, սթրեսային վիճակում, ունենում է ծանր բնավորություն, չի կարողանում կապեր հաստատել հասակակիցների և մեծահասակների հետ, ունենում է ոչ ադեկվատ, ցածր ինքնագնահատական:



4. Եզրակացություն:

Այսպիսով, եկանք եզրակացության, որ «ընտանիք» տերմինը ներառում է մի խումբ մարդկանց, որոնք բաղկացած են տարբեր կապերով միավորված մարդկանցից: Այս համակարգը հասկացվում է որպես բաց ամբողջություն, որում բոլոր բաղադրիչները սերտորեն կապված են միմյանց հետ: Այս սերտ հարաբերությունների շնորհիվ նրանցից յուրաքանչյուրի պահվածքը կարող է ազդել ընտանիքի դինամիկայի վրա:

[Ընտանիքի](#) յուրահատկություններից մեկն այն է, որ մի քանի մարդ ամենասերտ փոխհարաբերությունների մեջ են լինում երկարատև ժամանակահատվածում, մի քանի տասնյակ տարիների ընթացքում: Նման ինտենսիվ փոխազդեցության համակարգում դժվար է գոյակցել առանց վեճերի, կոնֆլիկտների, և ճգնաժամերի: Ընտանիք կազմելուց հետո սկսվում է ամուսնական առօրյան իր հոգսերով, ամուսինների միջև կարող են առաջանալ նաև հակասություններ, կոնֆլիկտներ, որոնք առաջ են բերում ներընտանեկան անբարենպաստ փոխհարաբերություններ: Այդ կոնֆլիկտները կարող են վերաբերվել ամուսնական կյանքի տարբեր կողմերին, դրամին, հետաքրքրություններին, բարեկամներին, ազգականներին, երեխաներին և այլն: Ներընտանեկան անբարենպաստ փոխհարաբերությունների առաջացման հիմնական և ավելի հաճախ հանդիպող պատճառներից մեկը կոնֆլիկտներն են ընտանիքի անդամների միջև: Ընտանիքի անդամների միջև միշտ առկա է պայքար հանուն իշխանության, հանուն որոշումներ կայացնելու իրավունքի: Օրինակ, [ծնողի](#) և [երեխայի](#) միջև որոշակի պայքար է առաջանում, թե տարբեր խնդիրների շուրջ ով է վճիռ կայացնելու: Կոնֆլիկտների առաջացումն ավելի հավանական է դառնում հետևյալ պայմանների առկայության դեպքում կամ հետևյալ պատճառներով.

1. սեփական ես-ի նշանակալիության, կարևորության պահանջմունքի, չբավարարվածության, ամուսիններից մեկի սոցիալական դիրքի ցածրացում,
2. դրական հույզերի, պահանջմունքի, չբավարարվածության, փոխըմբռնման բացակայության և այլն,

3. ցածր կրթամակարդակ,

4. աշխատանքի բացակայություն և ֆինանսական դժվարություններ,

5. կախվածություն ծնողների ընտանիքներից:

Կոնֆլիկտների հիմքում ընկած են ամուսինների նպատակների և հետաքրքրությունների օբյեկտիվ տարբերությունները, որը հարաբերություններում ընդունվում է որպես հակադրություն: Սոցիալ-հոգեբանական հետազոտությունները հնարավորություն են տալիս առանձնացնել ընտանեկան կյանքում առաջացող [կոնֆլիկտների](#) 4 տեսակ.

1. Ներանձնային- պետք է նշել, որ այն մարդը, որն ունի ներքին կոնֆլիկտներ, հաճախ սխալ է գնահատում շրջապատի մարդկանց և տեղի ունեցող իրադարձությունը:

2. Միջանձնային-կոնֆլիկտը ծագում է 2 կամ ավելի մարդկանց միջև: Միջանձնային կոնֆլիկտն առաջանում է մարդկանց համատեղ աշխատանքի ժամանակ և ծագում հակադրությունների լուծման ժամանակ:

3. Անհատական-խմբային կոնֆլիկտը առաջանում է այն ժամանակ, երբ անհատի նպատակը, վարքը չի համապատասխանում խմբի նորմերին:

4. Միջխմբային կոնֆլիկտ-այս դեպքում կարող է տեղի ունենալ բախում տարբեր խմբերի նպատակների, վարքի միջև:

Հակամարտությունները կամ վեճերը կազմում են հասարակության մեջ կյանքի անբաժանելի տարր: Հաշվի առնելով դա՝ այն կազմված է տարբեր կարծիքներ և մտածելակերպ ունեցող տարբեր անհատներից: Բացի այդ, լավ կառավարվող հակամարտությունը հաստատվում է որպես զարգացման և առաջընթացի միջոց, ուստի անհրաժեշտ է դրան դիմակայել՝ դրանից դասեր քաղելու համար: Ակնհայտ է, որ ընտանեկան կոնֆլիկտը բնական բան է, քանի որ ընտանիքի միավորի անդամների համակեցության պայմաններում՝ տարբեր տարիքի, մտքի և կյանքի տեսնելու ձևերի հետ, բախումն անխուսափելի է: Այնուամենայնիվ, հիմնարար է ոչ թե ամեն գնով բախումներից խուսափելը, քանի որ դա անհնար է, այլ խուսափել

ագրեսիվության սրացումից և այն կարգավորել խելացիորեն:

Այն պահին, երբ ընտանիքում կամ ընտանիքի տարածքում կոնֆլիկտ է հայտնվում, հայտնվում է նաև անկայունություն, որը կարող է հանգեցնել հիասթափությունների և անհանգստությունների :Ընտանեկան ցանկացած ճգնաժամ պահանջում է բոլոր անդամների համագործակցությունը, ինչպես նաև վերափոխում և հարմարեցում նոր իրավիճակին, քանի որ ընտանեկան վեճի ընթացքում ընտանեկան համատեքստում սահմանված կանոնները դառնում են անորոշ, և դրանց վրա անհրաժեշտ է նորից աշխատել:

5. Օգտագործված գրականության ցանկ:

1. Սեդրակյան Ս.Ա., Ընտանիքի հոգեբանություն, Երևան, 2010:
2. Лобан Н.А. ,Конфликтология , 2008:
3. Ա.Ա. Նալչաջյան, Սոցիալական հոգեբանություն, Երևան, 2004:
4. Է.Գ. Էյդեմիլեր, Վ.Յուստիցկիս, Ընտանիքի հոգեբանություն և հոգեթերապիա, 2003:
5. Վ.Ի. Չագեպին, «Ընտանիքի հոգեբանություն», 1981:

